

նուկա և հովուեան՝ զնոսա որպէս արժան է և տես, զի որդիք են ամիրային Ապու-սէճայ»։ Էսա և երեսի ի հոգացողը զնոսա բանդար և ասէ (էջ 76)։

Կրնայ ըլլալ յատուկ անուն, բայց կրնայ ըլլալ պաշտօն մը։ Կայ պրս. Եւ. bandar որ կը նշանակէ «նաւահանգիստ» յայտնի են օրինակ Պարսկաստանի նշա-նաւոր նաւահանգիստները Պանտարգետոյ, Պանտարաբրոս՝ կասպից ծովին և Պարսից ծոցին վրայ։ Ասկէ զատ bandar տաճ-կերէնի մէջ դարձած է «մեծ, նշանաւոր»։ Կ'ընուի օր. bender şehir dir «մեծ քա-ղաք է»։ Ասկէ է նաև տճկ. šah-bender «հիւպատոս», որ բուն կը նշանակէ «քա-ղաքի մը թագաւորը»։ Կրնայ ըլլալ որ յիշեալ բանդարն ալ վերի ձևէն յառա-ջացած ըլլայ։

7. բաստ

Ապա էր է զի նստիս ընդ դրուց քա-ղաքին. բաստ է. այս քաղաքս քո է և այդ բարձր աշտարակս զի՞ է քեզ. ասա ինձ (էջ 43)։

Արդի Պարսկաստանի մէջ շատ սովո-րական է աս bast. երբ մէկը կտաւա-րութեան կողմէ հալածուած է կամ երբ ժողովուրդը պետութեան դէմ ցոյց կ'ուզէ

սարքել, տունը տեղը կը թողու և կ'ա-պաստանի մզկիթ մը, սրբատեղի մը, փոս-տատունը կամ այլ անբռնարարելի վայր մը և մէկը իրաւունք չունի զանոնք այն տեղէն դուրս հանելու։ Վերի հատուածին մէջ ալ կը թուի թէ յատու բառը այս իմաստով է. բայց կը յարմարի՝ եթէ առ-նենք հարցական. — բանտ է հոս որ նըս-տած ես։

8. գալագիլ

Եւ հայեցեալ ամիրայետն և ասէ գա-լագելով ընդ հնեպն, թէ ի՞նչ է սա (էջ 78)։

Կը գտնուի նաև արդի բարբառներուն մէջ (Երևան, Լոռի, Ղազախ) և կը նշա-նակէ «նեղասրտիլ, զայրանալ, բարկու-թենէն կատարիլ»։

9. գոռոչել

Արտասուեաց և գոռոչեաց և եհարց լալով և ասէ (էջ 54)։

Կը նշանակէ «գոռալ, գոչել» և կտա-մութեամբ ճիշտ այնպէս է ինչպէս հուլի-հատալիլ, քաշիլ-քատաշիլ, շաշիլ-շատաշիլ և մանաւանդ կոշ-կոտոշ. կայ նաև բառիս գոյականը՝ գոռոչ ձևով (Մարթին)։

(Շարունակելի)

Հ. ԱՃԱՌԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅՔ Ի ՀԱՐԱԻԱՅԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

(Շար. տես 1921 թվ. էջ 144)

Գալով առ Երկրորդ Դարն, տեսանեմք, դարձեալ ըստ վկայաբանութեան Եւսե-բիոսի, թէ Պոնտոս Աղեքսանդրացի իմաս-տասէն, Աղեքսանդրիոյ Եպիսկոպոս Դե-մետրիայ Խրախուսանօր, այցելեց հա-րաւային Հնդկաստան 189 թուականին՝ ուր հանդիպեց Քրիստոնէից և սոցանէ ստանալով օրինակ մի Աւետարանի, ըստ

Մատթէոսի, Եբրայեցիքն լեզուաւ, տա-րաւ զայն Աղեքսանդրիա որոյ գոյութիւնն Հերոնիմոս ևս վկայէ, յիւրում ժամանակի (չորրորդ դարում) և նաև չէ թողմայ Առաքելութիւնն ի Հնդկաստան համայնա-պէս ընդունման էր։ Նիկիոյ Սուրբ Ժո-ղովոյն (325. Յ. Ք.) բողոքաբանութեանց մէջ յիշատակուած է թէ Յովհաննէս, Ա-

ռաջնորդ Պարսկաստանի և Հնդկաստանի ներկայ էր և ստորագրեց իւր անունն, փոռւմէնարիոս (300—360) Հարէշտանի «Ուաքեալ»-ն և Քրիստոնէութեան հիմնադրող այդ երկրում և որ բազում տարիներ իւր կեանքն արդէն անցուցած էր Հնդկաստանում, 326ին, Եպիսկոպոս ձեռնադրուելով Աղեքսանդրացի Աթանասիոսին (293—373) վերադարձաւ Հնդկաստան որպէս Առաջնորդ¹։ Յամին 345, Թովմաս Մոնիքէսիւրսն հերժուածողն երթալով Հրնդկաստան վաճառականութեան նպատակաւ՝ իւր թաղանթն քարոզեց այն տեղ առանց տեղական արդեանց, բայց սա նշանաւոր է այնու որ շահեցաւ ձեռք բերել, ընդ իշխաններէն, մասնաւոր իրաւունքներ Քրիստոնէից յաջողակ, որք քանդակուած տախտակների վերայ գծն ի պահեստի Հնդկաստանի Կոստայամ Կաթողոցով (Cot-tayam Collegi²)։ Քոսմոս Ինդոկոպոլիտոս, որ այցելեց Հնդկաստան 522ին, ասէ. — «Այդ երկիրներում բազմաթիւ Եկեղեցիներ կան»։ Նոյնպէս, վեցերորդ դարում, Gregory de Tours, Գաղղիացւոց համբաւաւոր պատմահայր, յիշատակէ որ ինքն ծանօթացաւ մի անձին հետ, Թէոդորոս անուամբ, որ այցելած էր Սորոյն Թովմայի գերեզմանն Հնդկաստանում։ Աստեմանոս գիտնականն վերահաստատէ Թովմայի քարոզութիւնն Հրնդկաստանում, ըստ Ասորական (Syriac) հեղինակութեանց զորս ինքն անձամբ Թարգմանեց Լատիներէնի, նա մանաւանդ նամակ մի Բենուտլոբոս Արիարենոս Նեստորական Պատրիարքէն, գրուած է. Դաւում, առ Սիմէօն՝ Պարսկաստանի Մետրոպոլիտն, յորում նախատէ նորան վան իւր անտարբերութեան՝ Հնդկաստանի Քրիստոնէից նկատմամբ, որով «Հնդկաստան, սկսեալ Պարսից Երվամոցոյն շրջափակ սահմաններէն մինչև Կօլօն (Մէյլօն),

տարածութեամբ յաւել քան զփարսաթիս տասներկու հարիւր, Թաղուած է խաւարի մէջ»³։

Ութներորդ Դարու Քրիստոնէութեան անցքերն Հարաւային Հնդկաստանում՝ մասնաւոր հետաքրքրութեան արժանի են մերազնէից համար, որովհետեւ բազում հեղինակներ յիշատակում են որ Ուռնայեցի (Եղեւսացի) Հայ մի, ըստ ոմանց՝ «Թովմաս Գանայ» և ըստ այլոց՝ «Մար Թովմաս» անուամբ, որ յառաջնաբար Հնդկաստանում վաճառականութեամբ զբաղուած էր, 745 թուականէն սկսեալ մինչև իւր մահ, մեծ դեր կատարեց Քրիստոնէութեան արածարժման և տարածման այդ երկրում, Յիշմբ, աստանօր, այդ հեղինակներէն երկունս. «Քրնաթովմա (Knâu Thôma) կամ Մար Թովմաս, Հայ վաճառական, այցելեց Հնդկաստան, Յ. Տ. 745»⁴։ «.... (Սիւնիերորդ Դարում) մինչդեռ, որպէս երևի, Հնդկաց Ուռնայեցիներն Սիւնիկոյ Նեստորական Պատրիարքի հպատակութեանն պատկանէր, Թովմաս Գանայ (Thomas Cana) անուամբ Հայ վաճառական մի իւր բնակութիւնն հաստատեց Մալաբարում (Հնդկաստանի Արևմտեան ծովեզերեայ սահմաններն)։ Նախքան այդ ժամանակն՝ Քրիստոնէայ եղբայրակցութիւնն թէ՛ անդր և թէ՛ Պոնոմանդլի ծովեզերքներում (Հնդկաստանի Արևելեան ծովեզերք), հալածուած բնիկ իշխաններէն, ըջուած էին Երկրին ներքնամասունքն՝ ապաստանարան որոնելով բլուրներում, թէ՛ արդեօք Մար Թովմաս կերպաւորապէս Եպիսկոպոսութեան աստիճանին կոչուած էր կամ ոչ (չգիտեմք, բայց) երևի որ կրէր տիտղոսն և պաշտօնաւարէր որպէս Եպիսկոպոս և մեծ ազդեցութիւն ունէր Հարաւային Հնդկաստանի մէջ։ Նորա պաշտպանութեան ներքոյ բնիկ երկրական Քրիստոնեայք վայելեցին ա-

1. Amanaseus. *Epistola ad Constantinum*.
2. Swanston. *Asiatic Journal*, 1833.
3. Montfaucon. *Patrum Graecorum* (tome II),

4. Assemanus. *Bibliotheca Orientalis* (Lib VII. p. 106).

5. Rev. Ricard Collins. *Missionary Enterprise in India*.

պահովութիւն և խաղաղութիւն, Կարծիք յայտնուած է թէ այս անձն, որ ամուսնացաւ և մեռաւ Հնդկաստանում և թողեց բազմաթիւ սերունդներ, արժանաւոր Քրիստոնեայն է որ շփոթուած է Առաքելական Սրբոյն հետ¹»։ Սոյն Հայի անունն, «Թովմաս Քանայ», մեզ առարկայ է լինում մտազբաղութան։ Թովմ մեզ թէ «Քանայ» նոյն է որպէս Քանաւայ զոր գիտեմք որ Հայ լեզուն որդեգրած է բուն Ասորականէն (Syriac) և որ, փոխ առ փոխ, զբոս ենք Քանաւայ և Քնաւայ։ Գլուամբ երևակայութեան չափազանցութեան ենթակայ է՝ եմք լինում² յայտնելով մեր այս համոզումն թէ Հայազգի թովմաս Եկեղեցականն ճանաչուելով իւր ժամանակակիցներէն որպէս «Թովմաս Քանայ», արձանագրուեցաւ Պատմիչներէն, ըստ ձայնի լսողութեան, որպէս թովմաս Քանայ։

Անգղիոյ առաքինասէր Թագաւորն, Մեծն Ալփրէդ, 883 թուականին, Գեսպանութիւն մի յղեց՝ յանձնին Սիլէլմ, Շիբբորնայ Եպիսկոպոսին ընդ քանի մի Ազնուականաց առ Միլափուռ, ի լրումն Քրիստոնէական ուխտեալ բաղձանաց իւր, որք այցելեցին Սրբոյն Թովմայի Մատուռն և յաջողապէս վերադարձան յԱնգլիա³։ Մարկո Պոլո, որ իւր հետաքրքրական ճանապարհորդութեան միջոցին անցաւ նաև Հնդկաստան (1292/ն) ունի իւր մասնաւոր վկայութիւնն տեղոյն Քրիստոնէից մասին։

Վերադառնալով արդ՝ առ Հայոց հաստատման խնդիրն Միլափուռում։ Հնդկաստանի նշանաւոր անցից և դարձից մի էր երբ Փորթուգալցին, Վասկո դա Գամա, 1498ին, խարխիւ ձգեց Հնդկաց Երովեզերում հանդէպ Ալալիլու քաղաքին, որոյ հետեց փորթուգալցւոց տիրումն զանազան

տեղեաց՝ այդ կողմի հողեմասներում, 1516ին, անցանելով, Սէլլոնի ճանապարհաւ, առ երկրին արևելեան ծովեզերեայ սահմաններն՝ հանդիպեցան սարսափելի պեկոծութեանց։ Ըստ զանազան Պատմաբանից՝ խղահար և բարեհաւատ նաւաստիքն աղօթեցին առ Սուրբ Մայրն Աստուածածին որ եթէ օգնէ իւրեանց հասանել յանցոյթ ի նաւահանգիստ՝ խոստանային կառուցանել Եկեղեցի մի յանուն Սրբուհւոյն։ Լոյս մի տեսին ցամաքին բարձանց վերայ որ առաջնորդեց նոցա առ այդ բարձունքն՝ որոց մի էր Միլափուռայ «Կրտսեայ» Բլուրն ուր գտին փոքրիկ հնաշէն Մատուռ մի կառուցեալ, ըստ աւանդութեան, ի վերայ Գերեզմանի Սրբոյն Թովմայի։ Սոյն Մատուռն փոխարկելով առ վայելչակերտ Եկեղեցի մի՝ ձօնեցին Սրբուհւոյն Աստուածածնի և անուանեցին *Nossa Sent.ra Da Luz*, այսինքն է, «Տիկին Լուսոյ մերոյ» և որ, հասարակօրէն, կոչման է «Լուզ» ի Եկեղեցին (The Luz Church)։ Քարտախտեակ մի՝ յիշատակելով վերյիշեալ Եկեղեցւոյ շինութիւնն և կրելով 1516 թուականն՝ զետեղուած է Եկեղեցւոյն որման վերայ, Եւ, ժամանակում իսկ, Միլափուռ քաղաքի անունն վերակոչեցին «Սէն Թոմէ» (S. Thome), այն է՝ «Սէյնք Թոմաս» ըստ Անգղիացւոց որ անուամբ շարունակեց այնուհետ։

Հինգ հատ Հայերի գերեզմաններ, ըստ փորագրութեանց գերեզմանաքարերին վերայ (1663 թուականէն մինչև 1754), կարելի է տեսնել «Լուզ» ի Եկեղեցւոյն շուրջ գերեզմանատան մէջ⁴։ Ուրիշ գերեզմանաքարեր ևս կան յաւել հնագոյն (ժ.Չ. դարու առաջին քառորդին պատկանելի) «Coja» կամ Խօջայ պատուանուամբ, բայց յականէ յանուանէ յիշուած

1. J. W. Kaye. *Christianity in India* (pp. 10 and 11. London, 1859).

2. William of Malmesbury, *Chronicles of the Kings of England* (b. II. C. IV.); *Saxon Chronicles* (p. 86) և այլն.

3. Julian James Cotton C. S. *List of Inscriptions on Tombs or Monuments in Madras of Archaeological Interest* (Madras, 1905).

չլինելով Հայ լինելն՝ անվաւեր մնան, ըստ ազգութեան:

1517ին, երկու փորձութեանցից, Դիօգօ Ֆէնանդէզ և Բաստէաօ Ֆէնանդէզ Մալաղայէն ժամանելով ի Պուէկատ (իբր եօթն փարսախօք առ հիւսիս Միլափուոնի) լսեցին վերաբերութեամբ ուխտատեղւոյն և մատրան Սրբոյն Թաւմայի որ ի Սէն Թօմէ, «գոր տեղեկութիւն ասացան քանի մի Հայ վաճառականներէց՝ »: Արեւրտ դէ Մանդէլսօ, որ ճանապարհորդութիւն մի կատարեց ի Հնդկս, 1638-1640 թուականներում, յիշում է որ քանի քանի Հայեր կային Սէն Թօմէում կամ Միլափուոնում: Ուսումնասիրողը Գաղղիոյ Արևելեան Հնդկաստանի Ընկերութեան՝ Պատմու-

թեանց՝ ծանօթ պիտի լինին Ֆրանսուա Մարտէն (François Martin) անունաւ որ, 1674ին, Հնդկաստանի Արևելեան ծովագերեայ քաղաքն, Պոնդիչըրի, քաջամարտիկ խիզարարութեամբ գրաւելով և անցանելով զայն Գաղղիոյ Իբօշի ներքոյ՝ դասուեցաւ ի շարս հերոսից Գաղղիական Պատմութեան մէջ: Նա մեծ դեր ունեցաւ նաև, 1672ին, երբ Գաղղիացիք գրաւեցին Միլափուոն, 1662էն՝ ի վեր, Գոլկոնդահ՝ Թագաւորի տիրակալութեան ներքոյ եղած էր: Մարտէն արդէն մօտէն ծանօթ էր Միլափուոնին և, 1672էն իսկ մինչև 1674, այդ քաղաքում իւր բնակութիւնն հաստատած էր: Ապաքէն՝ յաջողակութիւններ ունէր նա անձամբ ուսա-

1. H. D. Love, *Vestiges of Old Madras* (Vol. I. p. 287).

2. H. D. Love, » » » (Vol. I. pp. 306-304).

3. Այս Ընկերութիւնն հիմնեցաւ Ժ. Դարս մէջև, բում, բայց իւրեանց գործունէութիւնը չ'անցան անցք քան զՄարգարէսկար Աղլէն, Սակայն, 1664ին, Լուդուվիկօ Ժիփի համբաւօր Նախարարութեան, Կոլբեր (Colbert), ձեռն արկաւ մեծ եռանդամբ, յաւել զօրեղացիս վերակազմելոյ այդ Ընկերութիւնն, որոյ մէջ յաջողելով՝ 1667ին տօնօրէնեցաւ Գաղղիական առաջին Գործատունի (Factory) հիմնել Հնդկաստանի Սուրաթ քաղաքում: Ան ի լրումն սոյն նպատակի, այդ տարի (1667), փոքրիկ նաւախումբ մի, խնամք պատրաստել, յղեցին առ Հնդկաստան վերակացութեամբ երկու Պարսնների (gentlemen), այսինքն Պարսն Գառն (M. Caron), քաջամտօթ Գաղղիացի Նաւավար Արևելում, և միւսն էր Պարսն Մարգար Ավանչենց (M. Marcare Avanchenz), Պարսկաստանցի մի՝ ծննալ Պարսկաստանի Ապաւան Մարջարաքում, այլ ազնւածինն և մեծ ազգեցութիւնս ունեցող առաջին, զորմէ Ընկերութիւնն անկախէր մեծ զօրերու: Պատահաբար ժամանեցան ի Սուրաթ և, 1669ին, Ավանչենցն ատաղեցեղն Գոլկոնդա, ուր ունէր ազգեցեկ բարեկամներ, որպէս զի տեղւոյն Արքայից երկու արքունիքիւններ ձեռք բերել շահէր, մի՛ ի նպատակ Գաղղիական առաքութեան Գոլկոնդի երկամիջեղում և միւս մի՛ վառն Գաղղիական մի Գործատուն հաստատման Մուսուլիպատամու (ծովագերեայ կարեօր քաղաք մի առ Հնդկաստանի Մարջարի զօր, այդ ժամանակ, տեղւոյն Հայ բնակիչներն կոչէին «Մուլիքիսապար»): Ավանչենց սոյն երկու նպատակներն յաջողապէս կատարելագործեց, (Sbui, *Histoire des Indes Orientales*, tom III, p. 146; *Hist. de la Compagnie des Indes*, pp. 63

and 64, ըստ վկայութեան Dr. Nolandt, *History of the British Empire in India and the East*, Chap. LIX. pp. 110 and 111, յորմէ ծագեցաւ զորէն յտառլ բերեց աստ: Յայնապէս չ'է յիշուած թէ արդէն այս «Մարգար Ավանչենց» ապաւ Հայ էր: Յիշատակագրութիւն տեղեկարարն սորան *Persian* փրակողմամբ, որ կարելի է թարգմանել կամ Պարսիկ և կամ Պարսկաստանցի, նշմարել է ասկայն՝ որ մինչ ցայսօր իսկ՝ երբ Արաքսի Ազգեր Անցալի տան Պարսկաստանցի մի Հայի՝ բազմցն նկարագրեն նորան որպէս «Persian», յաւել նշանակելով Պարսկաստանցի: Թերևս նոյն նշանակութեամբ է և աստ: Բայց, զիարդ և իջէ, մեր ականջին երբեք զոչած չ'է «Մարգար Ավանչենց» որպէս մի Պարսիկ անուն, մինչդեռ շատ նման է այն Մարգար Յովնաթան Հայ անունաւ: Յովնաթանեանց Գործատունը եղած են և զեռ կան այսօր Նոր Զուլայում:

4. ԺԶ. զարու կհաւան, մինչդեռ Լինթիմօրի որդւոյ թոռն թոռն, Կայսրն Բաբըր, հիմնող Հնդկաստանի Մուղուլ Կայսրութեան և իբր որդի և յաջորդող՝ Հուսայուն, աղանապալից ժամանակի յախուռն հանգամանքներով շրջապատուած՝ ամբողջում էին իրեանց Կայսրութեան հիմունքն վերին Հնդկաստանում, ինչպէս Պետուքիւն զուգեցին իրեանց անկախութիւն Հայրաւային Հնդկաստանում: Սոցանէ մի և զօրեղագոյն քան զմիւս լրերին՝ Գոլկոնդի Պետութիւնն էր «Կաւուր Դաշ»ի Հաւատութեան ներքոյ, որ իբր մի և կէս զար տեղւոյ զկնէ՝ վերջ ի վերջոյ նուաճուեցաւ (1687ին) և մասն կազմեցաւ Մուղուլ Ահմադաբադի Առաջնորդի Կայսրի ձեռամբ: Գոլկոնդի անկախ չէին Մայրաքաղաքն, ինչպէս զմոնան երկարութեամբ առ Արևմուտս Հայդերաբադ, այժմ մասն կազմէ Նիզամի Երկրաբարձի: Ի հնում նշանաւոր էին ազամանդի հանքերն, ո՛ր շատ հեռի Գոլկոնդա Մայրաքաղաքն:

նեւոյ տեղոյն պատկանելի եղեւութեանց մանրամասնութիւնը, Բարեբաղդաբար՝ կարեւոր ինքնագիր աշխատութիւն՝ մի թուած է այս հոգակաւոր Գաղղիացին, որոյ մէջ այսպէս յիշատակազրէ. — «Հաւաստեց հաստատուած է որ Սէն Թոմէի³ ի բնէ սկզբնաւորութիւնն շատ մի Հայերի զործ էր որք այս տեղ իւրեանց բնակութիւններն հաստատած էին և զբաղէին առևտրականութեամբ և, նաև, ի պատահաւ իւրեանց նուիրական ջերմեանդութեան առ Սուրբն՝ որոյ անուանակիր էր Գաղղան, իւր փորթուզացիք ամբապէս հաստատուեցան Հնդկաստանի մէջ, այդ Ազգի անդամներն իւրեանց տեղաւորեցին երկրին բոլոր կողմերում և քանի մի ի նոցանէ Սէն Թոմէում, Այս տեղում միացան Հայերի հետ որք արդէն կային և կառուցին բնակարաններ և կազմեցին կարեւոր քաղաք մի՝ տուրևաութեանց ձեռնառութեամբ զորս ունեցան Հնդկաստանի միւս մասանց հետ, Հաւաստին թէ յառաջնեւորում այս տեղում կային ընտանիքներ որք միլիոնաւոր հարստութիւն ունէին, և, հիշող է որ առևտուրն այս տեղում, իւր առաջին օրերում, արդարև ոսկեհան մի էր»։ Ուրեմն՝ արդարացի է ենթադրել որ Տասնեվեցերորդ Դարու առաջին քառորդում Հայերն արդէն փարթամ և նշանաւոր մասն կազմէին Միլափուռի բնակչաց, ի միջի բարգաւաճութեան և բարեխաղութեան։ Բայց, թէ ինչ էր Միլափուռի վիճակն 1662ին, այսինքն, միևկէս դար փորթուզացւոց աւերիչ կառավարութեան ներքոյ լինելոյ զկէն, երբ այդ տարւոյն

Մայիսին Գոլկոնդաի Թագաւորն քսան հազար զօրօք՝ ամիսներ պաշարելով քաղաքն ի վերջոյ գրաւեց զայն, Թո՛ղ Ֆրանսուսա Մարտէն դարձեալ պատմէ. «Քաղաքին բնակիչը⁵ այն աստիճան հպարտացան ի ըմբոստանացան ի պատճառս «իւրեանց փարթամութեան» մինչ երկար «ժամանակամիջոց մի մերժել Գոսի «Փոխարքայի գերիշխանութիւնն, դուրս «վանելով վարչապետներն և բարձրազոյն պաշտօնակատարներն ընտրուած «Փոխարքայէն. և նոքա, որոց թոյլ տային «պաշտօնավարելոյ, անզօր էին իշխելոյ։ «Մարդասպանութիւնը, թիւնաւորութիւնը «և ուրիշ նոյնարեւոյթ եղեռնազործութիւնը առ հասարակ էին, որոց մասին «զօրհուրբելի անցքեր պատմեն բնակիչըն «որք տեղեկացուցին ինձ մանրամասնութիւններն, և, ինքեանք իսկ՝ ընդունին «իւրեանց դիպած արհաւիրքներն որպէս «արդար պատիժ յերկնից... մինչև «անգամ կրօնաւորը չլստաշանալին սուրբ «Հաղորդութիւն տալ (խոժանգործ ամբ «բոխների մահամբժ վերաւորելոց) առ «ուանց թոյլտուութեան երկուստեք հառ «կառակորաց»։»

Ահա, այդ էր եղկելի, անսուրբ և եղբարական վիճակ Միլափուռ քաղաքի 1662 Մայիսին՝ ի ներքոյ անզօր, Capitaio Mor⁶, Փորթուզացի վերջին Գաղղապետի տեղոյն, երբ Գոլկոնդաի Թագաւորն, Արդարաւարտ Կուսուր Շահ, զգրաւեց քաղաքն՝ հրամանատարութեամբ անուանի Միւր Զուլմահի⁶, որ 1655էն ի վեր Գոլկոնդաի Աւագ Նախարար էր և Սպարապետ։

1. François Martin. *Mémoire sur l'établissement des Colonies Françaises aux Indes Orientales*.

2. Իմա՛, Դոր Միլափուռ։

3. Այնպիսի առ այն Բաժին որ կազմէր Փորթուզացի բնակչութիւնն.

4. François Martin. Երկն որպէս ժամ. Թիւ 35, որ ի վեր։

5. Նամակ մի, կրելով 7 Ապրիլ, 1662 Թուական, գրուած Մադրասի Անգլիացւոց Աւագ Գործակատարէն առ իւրեանց Գործակատար որ ի Սուրբ, ի մէջ բերէ

անունն, Capitaio Mor, որպէս Փորթուզացւոց Քաղաքապետ Միլափուռում, այդ ժամանակում (Sinh, H. D. Love. *Vestiges of old Madras*. Vol. I. p. 198).

6. Սիւր Զուլմահ ազգու Պարսիկ էր, ծնուած Արդիստանի զեղաքաղաքում։ Ասպաններն մեծ. իւր ծնողք ակնաւոր անձինք էին Թէպէտե չըսուր, Բայց, ինչիցէ, միջոց գտաւ մասնաւոր գրական կրթութիւն ստանալոյ որով ծարթացաւ շահել զրազրի պաշտօն մի ազամանիչի վաճառականի մի մաս՝ որ ստէպ այցելէր Գոլկոնդա։ Այս տեղում՝ Զուլմահ ի վերջոյ Թոնջելով իւր վաճառական տիրոջն, իւր կողմանէ սկսեց առևտուր


Գծուարին չ'է երևակայել պատճառն որով Արդուլահ Կուտուր Շահ վճռեց Հայազգի Մարկոս Ըրզրազին կարգել Քաղաքապետ Միլափուռայ, հաւանականաբար 1662 Մայիսին, երբ նա գրաւեց այդ քաղաքն և գտաւ զայն ըստ առեւտրականութեան՝ քայքայեալ և ըստ քաղաքականութեան՝ զրբթէ մեռեալ, արդիւնք փորձուագացոյց եպերելի և անդիկ կառավարութեանն։ Անտարակոյս՝ քրիստոնեայ հասարակութիւնն կարեւոր մասն կազմելով տեղւոյն բնակչութեան՝ ենթադրելի է հասարակ է (ի բացակայութեան փաստիւր վկայեալ ապացոյցներէ) որ Քրիստոնեայ քաղաքապետի մի անհրաժեշտութիւնն մասամբ ազդեցութիւն պիտի ունեցած լինի թագաւորին վճռական տնօրինութեան վերայ, փորձուագացիք վարկարեկ, պարտեալ և նուաճեալ՝ վտարուեցան պաշտօնական գործառնութեանց մասնակցութենէ, ուստի՝ թուի մեզ թէ Մարկոս Ըրզրազը, լինելով Քրիստոնեայ և ունելով ազդեցիկ և առաջնակարգ դրութիւն Միլափուռում, կարգեցաւ Քաղաքապետի պաշտօնին մէջ զոր 1664 փետրուարին դեռ շարունակէր, որպէս իւր նամակն առ Անգղիոյ Թագաւորն, կարողոս Երկրորդը, ցուցանէ։

Եթէ խնդիր լինի թէ Մարկոս Ըրզրազը, մինչդեռ Քաղաքապետ՝ ընտրեալ Գոլկոնդաի թագաւորէն և մինչդեռ վարէր զայդ պաշտօն իսկ, ինչ ղիտաւորութեամբ կամ որո՞յ ներքին և կամ արտաքին պատճառներէ մղեալ՝ և թէ արդեօք բոլորովին ինքնաբերաբար՝ փոյթ յանձին կալաւ լանալ Անգղիական հպատակ արձանազրուելոյ, այդ ի վեր է քան զկար և զար-

դիս սահմանափակ գիտութիւն մեր ի բացայայտել, բոլորովին անտեղեակ զուով ի մասին ժամանակին չըջապատող դիւանագիտական անցից և դարձից։

Բարյատն (Անգղիա)

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՐԵԱՆ



Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ս Ե Ր Ո Ս

Ո Դ Ի Ս Ա Կ Ա Ն

Ա. ԵՐԳ

(Շար. տես Բազ. 1922 էջ 118)

Վերնայարկէն՝ ուր էր դըստրիկն իկարեան՝ Պենելուպէն ըզգոյն՝ հոգւովը լըսեց Աստուածային նըւագն, ու վար իջաւ շուտ Պալատին բարձր սանդուղէն, մինակ չէր, Այլ երկու հատ աղաթիւններ կային հետն։ Երբ կիններէն վեհը հասաւ տարփածուաց, Արձանացաւ կեցաւ չըբեղ՝ պընդակազմ Սրահին չեմին վըրան, այտերը ծածկած փաղփիւնափայլ քողով, ունէր երկու կողմն Աղաթիւններն համեստ. իսկ ինք լալագին՝ Աստուածային երգչին ուղղեց այս խօսքերն.

«Ո՛վ փեմիոս, դուն ուրիշ շատ երգ գիտես Մահացուները մոգելու, ձեռնարկներ Աստուածներու եւ մարդերու, զոր երգելը կը հրդալեն. ատոնց միջեւ նըստած դուն Այդ գործերէն մէկը երգէ, եւ ատոնք թող լըտութեամբ իըմեն գինին. բայց դուն արդ Այդ տըլուր երգը դադրեցուր, որ սըրտիկս իմ կնոթքիս մէջ կը կեղեքէ յարածամ, Զի անունս սուգ մ'եկաւ հասաւ իմ վըրաս։ Ես սիրելի զըլխուն կարօտ ունիմ շատ, Միշտ ինչեւով այն քաշն՝ որուն պընճ փառքով Հընչեց բոլոր Ելլաղան՝ նոյն իսկ Արգոս»։ Պատասխանեց անոր ուշիմ Տելեմաքն.

«Ո՛վ մայր, ինչո՞ւ քու աջիդ գէշ կ'երեւայ, Քաղցրը երգին ուրախացին թող ըզմեզ ինչպէս որ իր հանճարը գինը կը դըրդէ. Մեր աղէտներն երգիչներն չեն ի գար, Այլ Գիտէն որ կը զըրկէ ուզածին։ Եւ ասոր գէժ բարկանայու հարկ չըկայ եթէ կ'երգէ Դանայեցոց բախտը ծանայ. Զի մարդիկ նոր երգն անկը կ'ախորժին։ Ուստի դուն քու սըրտովդ՝ հոգւովդ հանդուրժէ Զայն լըսելու. զի Ողիւստ միայն չէ զի Տըրքիոյ մէջ կորսընցուց դարձի օրն, Ուրիշ շատեր ալ նոյն նըման կորուսին։ Սակայն դու սուն դարձիր ու տես քու գործերդ,

առնել և պատկառելի հարստութիւն մի ժեռք բերեց որ նեցուկ եկ և իւր Արքային Դանքիւնում պաշտօն մի գնել և մէջ փոքր ժամանակի Սպարապետ լինիլ նորա զորգնդին»։ (Sé., Dr. Nolan. History of the British Empire in India and the East, Chap. XLII, Ժառ. p. 663)։ Ո՛վ էր արդեօք այդ «աղամաշի վճռականներն», Մարկոս Ըրզրազը չոյնութիւնն ժամանակակից վկայութիւններով յաւել ջոշափելի տեսակ հաստատելոյ փափագաւ՝ երանի առեմք կթէ այդ վճռականի անունն յիշատակուած լինէր այս տեղ։